

Յարութիւն Թումանեանց. «ՀԱՋԱՐԱՆ-ՈՒՅՈՒՆ»։ Ֆէէրիա. երեք արարուածով և շորս պատկերով. (արտատպուած «Լումայից»)։ 71 եր. գ. 30 կ. Թիֆլիս, 1902 թ.

Պ. Յարութիւն Թումանեանցի «Ֆէէրայի» գործողութիւնը կատարւում է «Վանայ ծովակի շրջակայքում հեթանոսական դարերում»։

«Ֆէէրայի» բովանդակութիւնը մի կատարեալ «հարիսա» է ժողովրդական հէքիաթներէից և հին բեկտազիրների մէջ պատահող անուշներէից։

Մաննայի թագաւորը ուզում է մի չնաչխարհիկ պալատ կառուցանել. երկու անգամ նա արդէն շինել ու քանդել է պալատը, որովհետեւ, ինչպէս ողին ասում է նրան.

«Աչխարհիս վերայ ամեն կատարեալ

Ու լիակատար կատարելութիւն

Կարօտ է դարձեալ կատարելութեան»։

Երբորդ անգամն էլ պալատը պէտք է աւերուի, որովհետեւ, չը նայելով ամբողջ շքեղութեանը, նրան պակասում է դարձեալ մի բան, սակայն այս անգամ ողին խղճում է Մաննայի թագաւորին և յայտնում է գաղտնիքը.

«Նոր չէնքիդ համար պակաս է միայն

Հազարան-բլրուլ անդին թռչունը...»

Մաննա թագաւորի կրտսեր որդին, Սուրէնը, յանձն է առնում դնալ բերել Հազարան-բլրուլը. նա խիզախ է և անվահեր. նրա մեծ եղբայրները, Հրանտ և Պարէտ, ծիծաղում են նրա վրայ. Բայց ստիպուած նրանք էլ են հեռանում՝ պալատից իբր թէ Հազարան-բլրուլը բերելու համար. Սուրէնը յաղթելով անթիւ արգելքների և կեանքը վտանդի ենթարկելով, վերջ ի վերջոյ յաջողեցնում է տիրանալ Հազարան-բլրուլին. Սակայն ճանապարհին եղբայրները բռնում են նրան, գցում են մի հորի մէջ և բլրուլը առած գալիս են պալատը ու հաւատացնում բոլորին, թէ իրանք են բռնել բերել Հազարան-բլրուլը. Բայց Սուրէնին հորից ազատում է մի պառաւ կին. Սուրէնը ծպտած կերպով, գիմակաւոր (?), իբր մի բանաստեղծ, գալիս է պալատը հէնց այն ժամանակ, երբ հսնդէս է կատարւում ի պատիւ նրա մեծ եղբայրների, և բանում է գաղտնիքը, վիպասանութեան ձևով պատմելով եղելութիւնը. Յանցաւորները մնում են ամօթահար և մահուան պատժից ազատւում են միմիայն Սուրէնի խնդրքի և ոգու միջնորդութեան շնորհիւ, իսկ Սուրէնը ի հարկէ փառաւորւում է։



Ֆէէրիան գրուած է ոտանաւորով, որի գրական արժէքը չափելու համար բաւական են հետեւեալ օրինակները.

«Օ՛, Պարնիս, Հալդիա, Տիասպաս,  
Արքային երկար կեանք ու օր տաս.  
Յարաժամ թող լինի նա յաղթող,  
Որ սփռէ թշնամուն ահ ու դող.  
Արամազդ, Անահիտ ու Նանէ,  
Արքայի զաւակաց դու պահէ...»

(42 եր.)

«Խնդրեց, աղերսեց, որ թողնենք անդ  
Ու մեր յանդուգն մտադրութիւնը...»

(52 եր.)

«Երկու չարանենգ եղբայրները վատ  
Անտառի խորքում նստան յուսահատ...»

(60 եր.)

Տ. Յ.

«ԱՄՈՒՐԵՆՆ». Հայ կանանց օրացոյց-հանդէս. 1903 թ. Առաջին տարի. խմբագրեց  
Տիկին Նուարդ Ափինեան. 122 եր. դ. 50 կ. Ալեքսանդրօպօլ:

«Ախուրեանը» սովորական համառօտ օրացոյց է, որին իբր յաւելուած կցուած է մի փոքրիկ ֆէմինիստական ժողովածու, ֆէմինիստական բառի ընդարձակ նշանակութեամբ:

Ժողովածուն սկսւում է մի վերին աստիճանի անգրագէտ յօդուածով, որ՝ պէտք է յուսալ՝ խմբագրական յօդուած չէ, թէև անստորագիր է: Յօդուածը կրում է «Մօր նշանակութիւնը» վերնագիրը և պարունակում է ի միջի այլոց այսպիսի մի սլաք-բերութիւն (բերում ենք ամբողջը՝ վերջակէտից վերջակէտ) — «Այն ընտանիքի մայրը, որի աչքի առաջն է իւր պարտաւորութիւնների իդէալը, որովհետև նա գիտէ, որ այս տաղտալի մօղայիկից պէտք է գեղեցիկ տեսարան դուրս դայ»:

Արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ յօդուածը միակ անգրագէտն է ամբողջ ժողովածուի մէջ, որ ընդհանրապէս կազմուած է յաջող կերպով:

Ընթերցողներին ժողովածուի բովանդակութեան մասին գաղափար տալու համար բերում ենք յօդուածների ցանկը.

1) «Կնոջ դերը». Մառի. 2) «Դաստիարակութիւն իգական սեռի». Մառի. 3) «Երեխաների ստախօսութիւնը» (Բեօմէի մանկավարժական նամակներից). 4) «Յղի կնոջ և ծննդկանի կենդանավարութիւնը». կին բժիշկ Վ. Ա. Վօլկէնշտէյն. 5) «Ինչպէս պէտք է խնամել նորածին» (քաղուածք Жукъ-ից և Car.